

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ»
Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՎՊՄԻ-ի ռեկտոր, ք.գ.դ., պրոֆեսոր
_____ Գ.Կ. Խաչատրյան
“ 08” __07__ 2010թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ «ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ»**

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում
(արձանագր. թիվ _6__ “_08__ “____07_____ 2010թ.)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգով սահմանվում է ՎՊՄԻ-ի «Բարեկամների ակումբի» (այսուհետ «Ակումբ») կազմակերպման և անդամների հավաքագրման կարգը:

1.2 Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ՎՊՄԻ-ի ռեկտորի ներկայացմամբ, գիտական խորհրդի որոշմամբ:

2. «ԱԿՈՒՄԲԻ» ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Ակումբի» նպատակն է՝

2.1 Համակողմանի համագործակցության շնորհիվ նպաստել ինստիտուտի ուսումնամեթոդական, գիտական, մշակութային կյանքի որակի բարելավմանն ու կատարելագործմանը:

2.2 Աջակցել կրթության ոլորտում նորարարական-փորձարարական գործունեության զարգացմանը:

2.3 Արտաքին կապերի շնորհիվ օժանդակել ուսանողների և աշխատակիցների մասնագիտական փորձի փոխանակմանը, կազմակերպել օնլայն դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ:

2.4 Աջակցել լավագույն ուսանողներին կրթաթոշակներ տրամադրելու և աշխատանքի տեղավորելու գործնթացին:

2.5 «Ակումբն» իր նպատակները և խնդիրներն իրականացնելու համար կազմակերպում և իրականացնում է գիտաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ, բազմաբնույթ միջոցառումներ:

3. «ԱԿՈՒՄԲԻՆ» ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

«Ակումբի» անդամ կարող են դառնալ՝

3.1 Ինստիտուտի բոլոր տարիների՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիություն ունեցող շրջանավարտները (անկախ գործունեության բնույթից), ովքեր հետաքրքված են ինստիտուտի զարգացման և առաջընթացի գործընթացով:

3.2 ՀՀ և արտերկրյա ուսումնական հաստատությունների գիտնականներ, դասախոսներ, մշակույթի գործիչներ, ճանաչված մարզիկներ:

3.3 Ինստիտուտի դասախոսների գիտական ատենախոսությունները ղեկավարած գիտնականները:

3.4 Աժ պատգամավորներ, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ, գործարարներ, հայ առաքելական

եկեղուցու ներկայացուցիչներ և այլ ինստիտուտի կողմից հրավիրված անձինք, կարող են առաջադրվել նաև անձնական նախաձեռնությամբ:

3.5 «Ակունբի» անդամության հայտի ձևաթուղթը ներկայացվում է *Հավելված 1*-ում:

4. «ԱԿՈՒՄԲԻ» ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐՄԻՆ

4.1 «Ակունբի» ղեկավար մարմինն են «Ակունբի» խորհուրդը, նախագահը, վերստուգիչ հանձնաժողովը:

4.2 «Ակունբի» ղեկավար մարմնի ընտրության կարգը ներկայացված է *Հավելված 2*-ում:

4.3 «Ակունբի», ինչպես նաև հանձնաժողովի կազմը հաստատվում է գիտխորհրդում՝ ՎՊՄԻ-ի ռեկտորի ներկայացմամբ:

4.4 «Ակունբի» խորհրդի նախագահը յուրաքանչյուր տարվա ավարտին ներկայացնում է կատարված աշխատանքների հաշվետվություն:

5. «ԱԿՈՒՄԲԻ» ՖՈՆԴԸ

5.1 «Ակունբի» ֆոնդը ձևավորվում է ՎՊՄԻ-ի ռեկտորի և «Ակունբի» ղեկավար մարմնի առաջարկությամբ և հաստատվում է գիտխորհրդի որոշմամբ:

5.2 «Ակունբի» ֆոնդը տնօրինում է «Ակունբի» խորհուրդը:

5.3 «Ակունբի» ֆոնդը վերահսկում է վերստուգիչ հանձնաժողովը:

6. ԵՏԱՂԱՐՁ ԿԱՊ

6.1 ՀՀ, քաղաք Վանաձոր, Տիգրան Մեծի 36:

6.2 Ֆաքս: 4-18-56 / էլ.փոստ: vspi@mail.ru // E – mail: info@vspi.am

ՎՊՄԻ-Ի «ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ» ԱՆՂԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՁԱԹՈՒՂԹ

Լուսանկար

1

Անուն, հայրանուն, ազգանուն

Ծննդյան փվը, ամիս, ամսաթիվ

Հասցե, հեռ. համար

2

Կրթությունը (բուհը), մասնագիտությունը

3

Գործունեության ոլորտը, պաշտոնը

4 Դուք ին՞չ նախաձեռնություններ ունեք, որոնցով կարողանայիք առաջարկել Վանաձորի Հովի. Թունանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի միջազգայնացման գործընթացի, գիտա մեթոդական, մշակութային, սպորտային և այլ ոլորտներում աշխատանքների զարգացման վերաբերյալ

5 Ինչպիսի մասնակցություն ունեք այլ բուհերի զարգացման գործընթացում, և որ՞ն է Ձեր դրդապատճառը նման գործունեությանը զբաղվելու համար

6 Ինչ ակնկալիքներ ունեք մեր հետագա համագործակցությունից

ՎՊՄԻ-Ի « ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ» ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄՆԻ ՁԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 1.1 «Ակունքի» ղեկավարման խորհուրդը** կազմավորվում է ներկայացուցչական սկզբունքով:
- 1.2** Ընտրվում է 2 տարին մեկ անգամ:
- 1.3** Բաղկացած է 15 անդամներից:
- 1.4** Յուրաքանչյուր տարվա ավարտին «Ակունքի» խորհուրդը ներկայացնում է կատարած աշխատանքների և ֆինանսական հաշվետվություն:
- 1.5** «Ակունքի» խորհրդի կազմն առաջարկում են «Ակունքի» անդամները:

- 2.1 «Ակունքի» նախագահին** ընտրվում է բաց քվեարկությամբ, 2 տարին մեկ անգամ:
- 2.3** «Ակունքն» ունի քարտուղար, ով վարում է «Ակունքի» գործավարությունը:

- 3.1 Վերստուգիչ հանձնաժողովը** ընտրվում է ներկայացուցչական ժողովի ժամանակ:

Մեծարգո՝ պարոն _____ ,

գնահատելով Ձեր հոգատար վերաբերմունքը գալիք սերնդի կրթության և՛ դաստիարակության գործընթացում, ինչպես նաև հաշվի առնելով Ձեր բայրացականությունը մեր բուհի նկատմամբ՝ հրավիրում ենք անդամակցելու ՎՊՄԻ-ի «Բարեկամների ակումբին»:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ մեր կայք էջում [www. vspi.am//](http://www.vspi.am//) vspi@mail.ru
// E – mail: info@vspi.am

Հարգարժան տիկին _____ ,

քաջատեղյակ լինելով Ձեր աշխատանքային, հասարակական գործունեությանը, Ձեր՝ հոգատար և մարդասիրական վերաբերմունքին, ինչպես նաև գործուն ու անձնվեր աշխատանքին՝ ուղղված մեր համայնքի բարգավաճմանը, հրավիրում ենք անդամակցելու ՎՊՄԻ-ի «Բարեկամների ակումբին»:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ մեր կայք էջում [www. vspi.am//](http://www.vspi.am//) vspi@mail.ru
// E – mail: info@vspi.am

Գերաշնորհ տեր՝ Վահան քահանա Ազարյան, գնահատելով Ձեր անձնվեր աշխատանքը մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության, կրթության, ինչպես նաև Ձեր ավանդը ազգապահպանության գործընթացում և անմնացորդ նվիրումը Ձեր կոչմանը՝ հրավիրում ենք անդամակցելու ՎՊՄԻ-ի «Բարեկամների ակումբին»:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ մեր կայք էջում [www. vspi.am//](http://www.vspi.am//) vspi@mail.ru
// E – mail: info@vspi.am

Հարգելի պարոն _____

քաջատեղյակ լինելով Ձեր աշխատանքային գործունեությանը, մտքի ճկունությանը, վաստակին՝ հրավիրում ենք անդամակցելու ՎՊՄԻ-ի «Բարեկամների ակումբին»: